ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/58/2026

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան **18 մայիսի 2026թ.**

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Եփրեմ Կարապետյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2026 թվականի մայիսի 18-ին քննության առնելով «Սահմանադրական իրավունք միություն» կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) նախագահ Հայկ Բորիսի Բաբուխանյանի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 189.15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/58/2026 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 24-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ և 28-րդ կետերով սահմանված Հանձնաժողովի լիազորության շրջանակներում, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի

համաձայն՝ իրականացրել է 2023 և 2024 թվականների ընթացքում Կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվությունների ստուգում, որի արդյունքում, ի թիվս այլնի, պարզել է հետևյալը.

1.1.1 Կուսակցության՝ 2023 թվականի տարեկան հաշվետվության «Ծանոթություն 1» թերթի «Մուտքի վճարներ և անդամավճարներ» տողում ստուգման օրվա դրությամբ լրացված է 1,757,000 (մեկ միլիոն յոթ հարյուր հիսունյոթ հազար) ՀՀ դրամ գումար, մինչդեռ Կուսակցության տրամադրած բանկային հաշվի քաղվածքով այն կազմում է 688,500 (վեց հարյուր ութսունութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ: Միաժամանակ, տարեկան հաշվետվության մեջ նշված չեն եղել անդամավճար վճարելու ամսաթիվը և վճարողի անձնագրային տվյալները:

1.2 Վերը նշված անհամապատասխանությունների առնչությամբ 2025 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ Մ-6419-2025 գրությամբ Կուսակցության ներկայացրած պարզաբանման համաձայն՝ 1,757,000 ՀՀ դրամից 979,500 ՀՀ դրամը գոյացել է բացառապես Կուսակցության կանոնադրությամբ նախատեսված անդամավճարներից և մուտքի վճարներից, որոնք հավաքագրվել են կանխիկ եղանակով: Բացի այդ պարզաբանել են, որ Հանձնաժողովի կողմից հաշվառված 688,500 ՀՀ դրամ մուտքի վճարների և անդամավճարների մեջ չի ներառվել 90,000 ՀՀ դրամ գումարը, որի հաշվառմամբ անդամավճարներից և մուտքի վճարներից ստացված գումարը կազմում է 778,500 ՀՀ դրամ:

1.3 Հանձնաժողովի 2025 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 01/4464-2025 գրությամբ Կուսակցությանը տրամադրվել է տասնօրյա ժամկետ՝ 1,757,000 ՀՀ դրամ գումարը Կուսակցությանը փոխանցած անձանց վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև անդամավճարները և մուտքի վճարները կատարած անձանց՝ Կուսակցության անդամներ հանդիսանալու փաստի վերաբերյալ հավաստող փաստաթղթեր ներկայացնելու համար:

1.4 2025 թվականի նոյեմբերի 28-ի թիվ Մ-7196-2025 գրությամբ Հանձնաժողով է մուտքագրվել Կուսակցության պարզաբանումը, համաձայն որի՝ 1,757,000 ՀՀ դրամը գոյացել է մուտքի վճարներից և անդամավճարներից: Նշվել է նաև, որ Կուսակցությունն իրավասու չէ և չի կարող ներկայացնել այն անձանց տվյալները, որոնք հրաժարվել են նման համաձայնություն տալուց: Բացի այդ նշվել է, որ շատ անդամներ միացել են Կուսակցությանն այն ժամանակահատվածում, երբ օրենքը չի նախատեսել կուսակցության անդամի տվյալների հրապարակայնացում:

Կուսակցության կողմից ներկայացված պարզաբանմամբ հավաստվել է նաև, որ Կուսակցության տարեկան հաշվետվությամբ որպես անդամավճար ներկայացված 979,500 ՀՀ դրամը տրամադրվել է կանխիկ եղանակով: Միաժամանակ, Կուսակցության կողմից ցանկով ներկայացվել են տվյալներ այն մասին, թե յուրաքանչյուր անձ ինչքան գումար է վճարել, այնուամենայնիվ Հանձնաժողով չեն ներկայացվել հավաստող փաստաթղթեր առ այն, որ համապատասխան վճարումներ կատարած անձինք հանդիսանում են Կուսակցության անդամներ, հետևաբար չի հիմնավորվել Կուսակցության հավաքագրած դրամական միջոցների՝ անդամավճարներ լինելու հանգամանքը:

Միաժամանակ, Կուսակցության տարեկան հաշվետվության անդամավճարներ տողում Կուսակցության կողմից կատարվել է շտկում և որպես անդամավճարի գումար լրացվել է բանկային քաղվածքով Կուսակցության ստացած 688,500 ՀՀ դրամը, որը, սակայն, Կուսակցության ներկայացրած պարզաբանումների հիման վրա իրականացված վերահաշվարկի արդյունքում, վարչական վարույթի ավարտից հետո, կրկին ենթակա է շտկման:

1.5 Հանձնաժողովը վերը նշվածի հիման վրա հայտնաբերել է, որ առերևույթ առկա են Օրենսգրքի 189.15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2026 թվականի ապրիլի 18-ի թիվ 01/1087-2026 գրությամբ Հայկ Բաբուխանյանին հրավիրել է նշված գրությունը ստանալուց հետո՝ 3-րդ աշխատանքային օրը՝ ժամը 14:00-ին, ներկայանալ Հանձնաժողով, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն, իսկ 5-րդ աշխատանքային օրը՝ ժամը 15:00-ին՝ գործի քննությանը մասնակցելու նպատակով:

Նշված ծանուցումը Հայկ Բաբուխանյանը ստացել է 2026 թվականի ապրիլի 21-ին (հիմք՝ էլեկտրոնային հավաստում):

1.6 Հայկ Բաբուխանյանը 2026 թվականի ապրիլի 22-ի թիվ Մ-1978-2026 դիմումով հայտնել է, որ ցանկանում է ծանոթանալ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի նյութերին, միաժամանակ՝ միջնորդել է ապրիլի 29-ին նշանակված գործի քննությունը հետաձգել, քանի որ Կուսակցությունը ներգրավված է 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք խորհրդարանական ընտրություններին: Այդ կապակցությամբ հայցել է նշանակված գործի քննությունը հետաձգել և նշանակել ընտրություններից հետո:

1.7 Հանձնաժողովի 2026 թվականի ապրիլի 27-ի թիվ 01/1179-2026 գրությամբ միջնորդությունը բավարարվել է մասնակի և գործի քննությունը հետաձգվել ու նշանակվել է 2026

թվականի մայիսի 13-ին՝ ժամը 15:00-ին: Միաժամանակ, վերջինիս տեղեկացվել է, որ կարող է գործի նյութերին ծանոթանալ 2026 թվականի մայիսի 6-ին՝ ժամը 15:00-ին՝ Հանձնաժողով ներկայանալով:

1.8 2026 թվականի ապրիլի 27-ին պատշաճ ծանուցված Հայկ Բաբուխանյանի բացակայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 72/26 ՎԻՎ արձանագրությունը՝ Օրենսգրքի 189.15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.9 2026 թվականի մայիսի 13-ին վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու նպատակով Հանձնաժողով են ներկայացել Կուսակցության նախագահ Հայկ Բաբուխանյանը և վերջինիս ներկայացուցիչը՝ փաստաբան Լևոն Բաղդասարյանը (այսուհետ՝ նաև Ներկայացուցիչ), և միջնորդություն են ներկայացրել գործի քննությունը հետաձգել՝ գործի նյութերին ծանոթանալու նպատակով՝ խնդրելով դրանք տրամադրել էլեկտրոնային փոստով ուղարկելու միջոցով: Հանձնաժողովը բավարարել է ներկայացված միջնորդությունը և գործի քննության օր է նշանակել 2026 թվականի մայիսի 18-ը, իսկ 2026 թվականի մայիսի 14-ի թիվ 01/1390-2026 գրությամբ էլեկտրոնային եղանակով տրամադրել է գործի նյութերը:

1.10 2026 թվականի մայիսի 18-ին՝ ժամը 16:00-ին, Հայկ Բաբուխանյանի և վերջինիս ներկայացուցիչ Լևոն Բաղդասարյանի մասնակցությամբ տեղի է ունեցել գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումներն ու պարզաբանումները

Գործի քննության ընթացքում Ներկայացուցիչը, անդրադառնալով կուսակցություններին դրամական հատկացումները միայն անկանխիկ եղանակով կատարելու մասին կանոնին, նշեց, որ Կուսակցության միջոցները սուղ են, Կուսակցությունը չունի իրավաբան, , իսկ հաշվապահը տարեց կին է եղել ու առկա իրավական կարգավորումներին, ինչպես նաև փոփոխվող նորմերին հետևելը Կուսակցության համար խիստ բարդ է: Նշվածի կապակցությամբ Ներկայացուցիչը վկայակոչեց քրեական արդարադատության ոլորտում Վճռաբեկ դատարանի նախադեպի մասին, որտեղ շինարարական անվտանգության հետ կապված իրավիճակում մարդ էր մահացել, և Վճռաբեկ դատարանը նշել է, որ ճիշտ է՝ անձի կողմից օրենքի չիմացությունը վերջինիս չի

ազատում պատասխանատվությունից, սակայն շինարարական ոլորտի եղած լցոնված ձևով իրավակարգավորումների պայմաններում անձը պարտավոր չէր իմանալ առկա իրավակարգավորումները: Նշվածին ի պատասխան՝ Նախագահողը հայտնեց, որ Հանձնաժողովը պարբերաբար իրազեկման միջոցառումներ է իրականացնում փոփոխված իրավակարգավորումների մասին:

Հայկ Բաբուխանյանի այն հարցին ի պատասխան, թե արդյո՞ք սույն դեպքով Հանձնաժողովը տեսնում է կոռուպցիոն ռիսկ՝ Հանձնաժողովը պարզաբանեց, որ սույն իրավախախտման առկայության պարագայում ռիսկ կա, սահմանված իրավակարգավորումները ենթակա են պահպանման և այդ նպատակով սահմանվել են կանխարգելիչ նշանակության նորմեր, այդ թվում՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով որոշակի վարքագիծ դրսևորելու դեպքում վարչական պատասխանատվություն սահմանելու միջոցով: Իրավախախտման առկայությունը ինքնին չի նշանակում, որ կուսակցությունը կոռումպացված է, սակայն հանրային հաշվետվողականության ապահովման նպատակով սահմանված նորմերը ենթակա են պահպանման, իսկ չպահպանելն առաջացնում է իրավական հետևանքներ, այդ թվում՝ վարչական պատասխանատվության տեսքով:

Հայկ Բաբուխանյանը նշեց, որ անդամավճարը Կուսակցությանը նվիրատվություն կամ փոխառություն չէ, այլ կանոնադրական պարտականություն է և վկայակոչված հոդվածների տրամաբանության մեջ չի մտնում: Եթե անձը հարյուր դրամ փոխանցելու համար պետք է գնա բանկ, ապա վերջինս այդ հարյուր դրամ անդամավճարը վճարելու համար բանկ չի գնա: Կանոնադրությունն ու Սահմանադրական օրենքը տրամադրում են հնարավորություն հավաքագրելու անդամավճարներ՝ չնայած, որ անդամավճարներով Կուսակցության ծախսերը հնարավոր չէ հոգալ:

Հայկ Բաբուխանյանը նշեց նաև, որ չունեն իրավաբան, մշտական գործող աշխատող անձինք: Կուսակցությունում չկան պաշտոնյաներ, իրավաբաններ, աշխատավարձ ստացողներ, դա մարդկային գործունեության այլ ոլորտ է: Կուսակցության անդամավճարների համար սահմանված է հարյուր դրամ: Առկա է Կուսակցության և անհատի միջև էմոցիոնալ կապը և այդ պարագայում ինչպես անձը պետք է գնա բանկ փոխանցի հարյուր դրամ և ավելացնի ևս հազար դրամ անկանխիկ փոխանցման կատարման համար:

Հայկ Բաբուխանյանը հայտնեց, որ տեղյակ չի եղել, որ Կուսակցության անդամները կարող են փոխանցումները Կուսակցության հաշվի համարին կատարել անկանխիկ եղանակով առանց բանկ այցելելու՝ հավելվածների միջոցով:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/58/2026 վարչական վարույթում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

3.1 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային շտեմարանի տվյալների համաձայն՝ Հայկ Բաբուխանյանը 2008 թվականի մարտի 28-ից հանդիսանում է Կուսակցության գործադիր մարմնի ղեկավարը՝ Կուսակցության նախագահ:

3.2 Կուսակցության կողմից ներկայացված պարզաբանման և հաշվետվությունների ստուգման արդյունքներով արձանագրված տվյալների համաձայն՝ 979,500 ՀՀ դրամի չափով անդամավճարները կատարվել են կանխիկ եղանակով:

3.3 Կուսակցության կողմից Հանձնաժողով չեն ներկայացվել հավաստող փաստաթղթեր առ այն, որ համապատասխան վճարումներ կատարվել են անկանխիկ եղանակով:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4.1 Սահմանադրական օրենքի՝ մինչև 2025 թվականի ապրիլի 1-ը գործած խմբագրությամբ 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ http://www.azdarar.am, հրապարակել ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի վերաբերյալ հաշվետվությունը: Կուսակցությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պահանջով պարտավոր է ներկայացնել հաշվետվության ստուգման համար անհրաժեշտ տեղեկություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, արժեթղթերի հետ կապված գործարքների վերաբերյալ տեղեկություններ,

ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ, ինչպես նաև վարկային տեղեկատվություն:

4.2 Սահմանադրական օրենքի՝ մինչև 2025 թվականի ապրիլի 1-ը գործած խմբագրությամբ 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող մայիսի 31-ից ոչ ուշ, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվությունը (այսուհետ՝ տարեկան հաշվետվություն), իսկ սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև դրա վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը: (...)

4.3 Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը ստուգում է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացման պահանջների պահպանումը և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատությունն ու ամբողջականությունը:

4.4 Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ Կուսակցությանն օրենքով սահմանված դրամական հատկացումները կատարվում են միայն անկանխիկ:

4.5 Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է կուսակցությունների ֆինանսական գործունեությանը և կուսակցությունների տարեկան հաշվետվություններին առնչվող խախտումների վերաբերյալ գործերը:

4.6 Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.7 Օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության

առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ: Սույն օրենսգրքի իմաստով՝ կուսակցության պաշտոնատար անձ է համարվում կուսակցության կանոնադրության կամ այլ փաստաթղթերի հիմքով՝ սույն օրենսգրքով պատասխանատվություն առաջացնող գործողությունների (անգործության) համար պատասխանատու կուսակցության ղեկավար մարմնի անդամը կամ կուսակցության՝ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պատասխանատու անդամը կամ աշխատողը:

4.8 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.9 Օրենսգրքի 189.15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կուսակցությանն օրենքով սահմանված նվիրատվություններն անկանխիկ չկատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում կուսակցության պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

4.10 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.11 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 189.15-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.12 Օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.13 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված դրույթը նպատակ է հետապնդում ապահովել հաշվետու տարվա ընթացքում Կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հանրային հաշվետվողականությունը, կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը: Նշված դրույթի նպատակն է **բարձրացնել բոլոր կուսակցությունների ֆինանսական գործունեության թափանցիկությունը և ֆինանսական գործունեության հանրային վերահսկողությունը:**

Հարկ է ընդգծել, որ Օրենսդրի կողմից նման կարգավորումների՝ Սահմանադրական օրենքով ամրագրումն ինքնանպատակ չէ և միտված է կարգավորելու կուսակցությունների մուտքերը՝ կանխելու կուսակցությունների ստվերային ֆինանսավորումները, նպաստելու կուսակցությունների միջև հավասար պայմանների ապահովմանը, խթանելու ֆինանսական թափանցիկության քաղաքականությունը՝ նվազեցնելով քաղաքական կոռուպցիայի ռիսկը: Նման կարգավորումների պայմաններում սահմանափակվում են ապօրինի, ստվերային ֆինանսավորումները, ինչը խթանում է քաղաքական գործընթացներում լայն հասարակության ավելի մեծ ներգրավվածությունը և մասնակցությունը, ինչպես նաև բարձրացնում է քաղաքացիների վստահությունը քաղաքական ուժերի նկատմամբ:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված զանցանքի հատկանիշներ և այնպիսի էական

վնաս է պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Սույն գործով Կուսակցությանը 2023 թվականի ընթացքում տրամադրվել է ընդհանուր 979,500 ՀՀ դրամի չափով կանխիկ գումար: Վարչական վարույթի ընթացքում Կուսակցության կողմից չի ներկայացվել որևէ ապացույց առ այն, որ վերոնշյալ գումարը Կուսակցությանը տրամադրվել է որպես անդամավճար և անկանխիկ եղանակով:

Վերոգրյալի հիման վրա պարզ է դառնում, որ գործով բացակայում են Կուսակցությանը տրամադրված դրամական միջոցները որպես անդամավճար դիտարկելու փաստական հիմքերը, ինչն իր հերթին ենթադրում է, որ այդ գումարները պետք է դիտարկվեն որպես կուսակցությանը կանխիկ կատարված նվիրատվություններ:

Ինչ վերաբերում է վարույթի մասնակցի այն դիրքորոշմանը, որ Վճռաբեկ դատարանը նշել է, որ ճիշտ է՝ անձի կողմից օրենքի չիմացությունը վերջինիս չի ազատում պատասխանատվությունից, սակայն շինարարական ոլորտի եղած լցոնված ձևով իրավակարգավորումների պայմաններում անձը պարտավոր չէր իմանալ առկա իրավակարգավորումները, Հանձնաժողովը հարկ է համարում վկայակոչել Վճռաբեկ դատարանի համապատասխան նախադեպային որոշումը, որի շրջանակներում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «(...) ՄՆԻՊ կանոններն անձանց համար հասանելի եղանակով պաշտոնական որևէ աղբյուրում հրապարակված չեն, այդ կանոնները կարելի է գտնել միայն համացանցային տիրույթում առկա ոչ պաշտոնական կայքէջերում, ինչը չի երաշխավորում դրանց համապատասխանությունը բնօրինակին և առաջացնում է ողջամիտ կասկած դրանցով սահմանված աշխատանքի պաշտպանության կանոնների արժանահավատության վերաբերյալ: Ընդ որում, հարկ է նաև ընդգծել, որ այդ կանոններն ի սկզբանե կազմված են եղել օտար լեզվով, իսկ դրանց հայերեն թարգմանված օրինակը հասանելի չէ որևէ աղբյուրում: (…) Վերոնշյալ հանգամանքների համակցությունը ցույց է տալիս, որ «Անվտանգության տեխնիկան շինարարությունում» վերտառությամբ թիվ III-4-80* ՄՆԻՊ կանոնները պետական իրավասու մարմնի կողմից Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես հրապարակված չլինելու պայմաններում ապահովված չի եղել նվազագույն ջանքերի գործադրմամբ դրանք գտնելու և ընթերցելու հնարավորությունը: Ուստի՝ «Անվտանգության տեխնիկան շինարարությունում» վերտառությամբ թիվ III-4-80* ՄՆԻՊ կանոնները, որոնց խախտումը մեղսագրվում է Գագիկ

Սարգսյանին, չեն համապատասխանել «հասանելիության» չափանիշին: Նման պայմաններում դրանք չեն համապատասխանել նաև «կանխատեսելիության» չափանիշին:»:

(Տե՛ս Վճռաբեկ դատարանի 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԵԿԴ/0258/01/16 https://arlis.am/ru/acts/126288 որոշումը):

Հանձնաժողովը վարույթի մասնակցի վկայակոչած վերոնշյալ դիրքորոշումը սույն գործի շրջանակում վերաբերելի չի համարում, քանի որ հիշյալ իրավական դիրքորոշումը ձևավորվել է այլ փաստական հանգամանքների շրջանակում, մինչդեռ սույն վարույթի առարկան քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման ոլորտում օրենքով սահմանված ֆինանսական թափանցիկության, հաշվետվողականության և դրամական միջոցների շրջանառության նկատմամբ վերահսկողության ապահովման գնահատումն է, որը ի թիվս այլնի կարգավորվում է «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով և Օրենսգրքի համապատասխան դրույթներով, որոնք տվյալ դեպքում համապատասխանում են «հասանելիության» և «կանխատեսելիության» չափանիշներին: Մասնավորապես՝ նշյալ օրենքները պաշտոնապես հրապարակված և հասանելի են հանրությանը, հետևապես պաշտոնատար անձինք պարտավոր են հետևել այդ պահանջների պահպանմանը և կանխատեսել վարչական իրավախախտումների դեպքում հնարավոր իրավական հետևանքներ առաջանալու հնարավորությունները: Միաժամանակ արձանագրվում է, որ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում և հարակից օրենքներում 2021 թվականին և դրանից հետո կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության լիազորությունը Հանձնաժողովին վերապահվելուց հետո ինչպես Հանձնաժողովի, այնպես էլ միջազգային գործընկերների կողմից իրականացվել են լայնածավալ իրազեկման, կուսակցություններին համապատասխան մասնագիտական աջակցություն ցուցաբերելու ծրագրեր, թրեյնինգներ որոնց մասին Հանձնաժողովը մշտապես հանդես է եկել հրապարակային հայտարարություններով և ծանուցել կուսակցություններին բոլոր հնարավոր եղանակներով, այդ թվում՝ հայտնի էլ. փոստի հասցեներին ծանուցումներ ուղարկելու միջոցով: Իրականացված ծրագրերի և միջոցառումների մասին պաշտոնական հայտարարությունները տեղադրված են Հանձնաժողովի պաշտոնական կայքում:

Այսպիսով, վարույթի ընթացքում պարզվել է, որ Կուսակցությունը ստացել է նվիրատվություններ կանխիկ եղանակով, սակայն քաղաքական կուսակցությունների

ֆինանսավորման իրավական կարգավորումների բովանդակությունից բխում է, որ նվիրատվությունները պետք է իրականացվեն անկանխիկ եղանակով՝ ապահովելու դրամական միջոցների շարժի թափանցիկությունը, դրանց ծագման վերահսկելիությունը և ֆինանսական գործունեության հաշվետվողականությունը: Կանխիկ եղանակով դրամական միջոցների ընդունումը չի ապահովում օրենքով հետապնդվող նպատակների լիարժեք իրացումը, մասնավորապես՝ կանխիկ եղանակով նվիրատվությունների իրականացումն էապես մեծացնում է ֆինանսական թափանցիկության խաթարման ռիսկը, քանի որ ամբողջությամբ չի ապահովվում դրամական միջոցների ծագման, փոխանցման աղբյուրի և իրական վճարողի նույնականացումը:

Մինչդեռ քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկության, դրամական միջոցների ծագման վերահսկելիության և հաշվետվողականության ապահովման նպատակով օրենսդրությամբ նախատեսվել է նվիրատվությունների անկանխիկ իրականացում, որը տվյալ դեպքում չի պահպանվել և հանգեցրել է Կուսակցության կողմից Օրենսգրքի 189.15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման կատարմանը: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Հայկ Բաբուխանյանը Օրենսգրքի իմաստով հանդիսանում է պաշտոնատար անձ՝ Կուսակցության նախագահ, ուստի առերևույթ իրավախախտման առնչությամբ պարտավոր էր կատարել կամ ապահովել Կուսակցության օգտին հատկացված գումարների անկանխիկ փոխանցումների իրականացումը:

Ամփոփելով ամբողջ վերոնշյալը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ «Սահմանադրական իրավունք միություն» կուսակցության նախագահ Հայկ Բաբուխանյանի կողմից թույլ է տրվել Օրենսգրքի 189.15-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված խախտում, այն է՝ կուսակցությանն օրենքով սահմանված նվիրատվությունները կատարվել են կանխիկ եղանակով:

Օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ: Սույն օրենսգրքի իմաստով՝ կուսակցության պաշտոնատար անձ է համարվում կուսակցության կանոնադրության կամ այլ փաստաթղթերի հիմքով՝ սույն օրենսգրքով պատասխանատվություն առաջացնող գործողությունների (անգործության) համար

պատասխանատու կուսակցության ղեկավար մարմնի անդամը կամ կուսակցության՝ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պատասխանատու անդամը կամ աշխատողը:

Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային շտեմարանի տվյալների համաձայն՝ Հայկ Բաբուխանյանը 2008 թվականի մարտի 28-ից հանդիսանում է Կուսակցության գործադիր մարմնի ղեկավարը՝ նախագահը, ինչով պայմանավորված՝ հանդիսանում է նաև Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 8-րդ մասի դրույթներով՝ Կուսակցության օգտին հատկացված գումարների անկանխիկ չկատարելու համար պատասխանատու պաշտոնատար անձ:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Հայկ Բաբուխանյանը՝ որպես Օրենսգրքի 14-րդ հոդվածով նախատեսված կուսակցության պաշտոնատար անձ, ենթակա է պատասխանատվության Օրենսգրքի 189.15-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքի համար:

Հիմք ընդունելով ամբողջ վերոշարադրյալը և ղեկավարվելով Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 8-րդ մասով, ինչպես նաև, Օրենսգրքի 189.15-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Կուսակցության նախագահ Հայկ Բորիսի Բաբուխանյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ ***100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:***

2. Տուգանքը պետք է վճարվի գանձապետական ***900005001335*** «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» ***հաշվեհամարին***՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը:**

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայկ Բաբուխանյանին այն սահմանված կարգով հանձնելուն (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ